ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

14 հոկտեմբերի 2025 թվական

# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Արտավազդ Խաչատրյանը, Աստղիկ Հակոբյանը, Եվա Մովսիսյանը, Սոնա Կարապետյանը, Թարո Ավետյանը, Կառլեն Մինասյանը

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը</u>**

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 14-ի թվով 12-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. «Կացարան թափառող կենդանիների համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համայնքային լրացուցիչ ներդրում կատարելու մասին/զեկուցող՝ Ա. Հովսեփյան/:
3.Վայքհամայնքում հողի կադաստրային արժեքի փոփոխմամբ պայմանավորված գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման պայմանագրերում վարձավճարի (վճարի) փոփոխություն կատարելու մասին/զեկուցող՝ Ա. Հովսեփյան/:
4.Վայք համայնքի Արտավան բնակավայր տանող ճանապարհի եզրերին գտնվող ծառերի էտման և չորացած ծառերի հատման աշխատանքներին թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
5.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուն նվիրաբերելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
6.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
7.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքը համայնքային սեփականություն

ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին/զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
8.Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան 15 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 31.0 քմ մակերեսով տարածքը Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիային 6 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/
9.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ
կատարելու համար Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
10.Վայք համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 88-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***«ԿԱՑԱՐԱՆ ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում-Փուլ 2» ծրագրի շրջանակում «Կացարան թափառող կենդանիների համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակում կատարել դրամաշնորհի գումարի մինչև 5%-ի չափով լրացուցիչ ներդրում:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 89-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ (ՎՃԱՐԻ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-ին մասին 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ, $48^1$-րդ հոդվածի 8-րդ, 81-րդ հոդվածի 3-րդ և 94-րդ հոդվածի 6-րդ մասերով, Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգի 57-րդ կետով.

1. Հաշվի առնելով Վայքիամայնքում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության նոր սահմանների և, ըստ այդմ, կադաստրային նոր արժեքների սահմանումը՝ համայնքում գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման բոլոր պայմանագրերը (այսուհետ՝ պայմանագրեր) վարձավճարի (վճարի) մասով վերանայել՝ կատարելով փոփոխություններ.պայմանագրերի գինը՝ տարեկան պարբերականությամբ, սահմանել անշարժ գույքի հարկի չափով՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված համամասնությունը՝ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով, 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 90-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵԶՐԵՐԻՆ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԻ ԷՏՄԱՆ ԵՎ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել Վայք համայնքի Արտավան բնակավայր տանող ճանապարհի եզրերին գտնվող ծառերի նկատմամբ իրականացնել էտման աշխատանքներ, ինչպես նաև նույն հատվածում գտնվող չորացած ծառերը (բարդի) հատել:
2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել բնակավայրի սոցիալապես անապահով ընտանիքներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 91-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ, 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով, և հիմք ընդունելով Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վայոց ձորի թեմի առաջնորդ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի 18.06.2025 թվականի թիվ 156-ԱՏ գրությունը.

1.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0042 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը նվիրաբերել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ երիցատուն կառուցելու նպատակով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 92-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

1. Համաձայնություն տալ՝
1.1/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 11/13 հասցեում գտնվող 10-003-0010-0137 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 29082025-10-0010, գաղտ. VRQIAMFLEZI) բնակավայրերի նպատակային նշանակության 0.00198 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 588 400 (հինգ հարյուր ութսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

1.2/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ա. Մելիքյան փողոց 1/30 հասցեում գտնվող 10-003-0004-0412 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 06092025-10-0002, գաղտ. ARZ8QSWNBL75) բնակավայրերի նպատակային նշանակության 0.03705 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք

համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 4 533 400 (չորս միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

1.3/ Վայք համայնքի Վայք քաղաքի Վ. Սարգսյան փողոց 1/3 հասցեում գտնվող 10-003-0024-0354 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 10112023-10-0014, գաղտ. 3SSNF44DRZLG) բնակավայրերի նպատակային նշանակության 0.21265 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 27 613 000 (քսանյոթ միլիոն վեց հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ:

1.4/ Վայք համայնքի Վայք քաղաքի Կամոյի փողոց, 1-ին նրբանցք 35 հասցեում գտնվող 10-003-0008-0135 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 19092025-10-0014, գաղտ. DJ4NXLLBDPBX) բնակավայրերի նպատակային նշանակության 0.1395 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 11 331 600 (տասնմեկ միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

1.5/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ազատության փողոց 1/5 հասցեում գտնվող 10-003-0003-0117 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 01082022-10-0020, գաղտ. RUEXG8SPSKA) բնակավայրերի նպատակային նշանակության 0.04 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 4 894 000 (չորս միլիոն ութ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

1.6/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս. Շահումյան փողոց 99/10 հասցեում գտնվող 10-003-0024-0378 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 05092025-10-0002, գաղտ. GELTJJIYKBLV) բնակավայրերի նպատակային նշանակության 0.00582 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 2 040 000 (երկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ:

1.7/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 32/46 հասցեում գտնվող 10-003-0031-0051 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 19092025-10-0013, գաղտ. FDANHQ4I9T5B) բնակավայրերի նպատակային նշանակության 0.03463 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 4 289 000 (չորս միլիոն երկու հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

1.8/ Վայք համայնքի Զեդեա բնակավայրում գտնվող 10-023-0306-0191 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 25062025-10-0014, գաղտ. 7UYN4JVFJYTX) գյուղատնտեսական նպատակային նշանակության 3.92136 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 7 843 000 (յոթ միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ:

1.9/ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 1-ին փողոց 30 հասցեում գտնվող 10-022-0001-0009 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 19092025-10-0010, գաղտ. BS2MBLMRHWRB) բնակավայրերի նպատակային նշանակության 0.11254 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 458 000 (չորս հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ:

1.10/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 2-րդ փողոց 10 հասցեում գտնվող 10-019-0009-0020 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 05092025-10-0022, գաղտ. 672QMTIAVB1Q) բնակավայրերի նպատակային նշանակության 0.07127 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 357 800 (երեք հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

1.11/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց 18 հասցեում գտնվող 10-019-0033-0001 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 02102025-10-0007, գաղտ. IGYJPTRAWDH6) բնակավայրերի նպատակային նշանակության 0.2 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 876 000 (ութ հարյուր յոթանասունվեց հազար ) ՀՀ դրամ:

1.12/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց 12 հասցեում գտնվող 10-019-0033-0005 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 24092025-10-0017, գաղտ. KGQP2HEH8TZQ) բնակավայրերի նպատակային նշանակության 0.17 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 744 600 (յոթ հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

1.13/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց 14 հասցեում գտնվող 10-019-0033-0004 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 25092025-10-0013, գաղտ. VMCHXKULCIHB) բնակավայրերի նպատակային նշանակության 0.19863 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 870 000 (ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -5 | Դեմ -1 | Ձեռնպահ -3 |
|---|---|---|
| Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ | Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ |
| Հ. ԱՎԱԳՅԱՆ | | Ս. ԲԱԲԱՅԱՆ |
| Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ | | Հ. ՋԱՆՈՅԱՆ |
| Ա. ՈՍԿԱՆՅԱՆ | | |
| Ա. ԱՐԱՄՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 93-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1.Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող, 6.2548 հա մակերեսով, 10-039-0307-0004 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

| | | |
|---|---|---|
| Կողմ -9 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՌՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 94-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 31.9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ 6 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի սոցիալական

աշխատողների ասոցիացիայի նախագահՄիրա Անտոնյանի 07.09.2025 թվականի թիվ AASW-75/25 գրությունը,

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան փողոց, թիվ 15 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Մանկական ստեղծագործության կենտրոնի տարածքից 31.9 քմ. մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով, 6 (վեց) տարի ժամկետով հատկացնել Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիային:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0
Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 95-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 312-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունը կատարելու համար.

1.1Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ առաջատար մասնագետ (աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի բաժին):
1.2 Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբից հանել առաջին կարգի մասնագետի հաստիքը (աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի բաժին, ծածկագիր՝ 3.2-2):
1.3 Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ առաջին կարգի մասնագետ (աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժին):
1.4 Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբից հանել առաջատար մասնագետի հաստիքը (աշխատակազմի գյուղատնտեսության և

բնապահպանության բաժին, ծածկագիր՝ 3.1-8):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում սույն որոշմամբ պայմանավորված լրացումը կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 96-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի նոյեմբերի 13–ին, ժամը՝ 18:30–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հ. ԱՎԱԳՅԱՆ
Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ս. ԲԱԲԱՅԱՆ
Ա. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Հ. ՋԱՆՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 97-Ա)*

Ավագանու անդամներ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Անուշ Ղազարյանը